ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

........................................................................................................................

17.02.2016թ.

Նիստին մասնակցում էին՝ Դ. Հովեյանը, Ս. Ամիրխանյանը, Մ. Մարինոսյանը, Գ. Ղարիբյանը, Ա. Հովեյանը, Ա. Դվոյանը, Ս. Գապոյանը, Պ. Հակոբյանը
Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## *Օ Ր Ա Կ Ա Ր Գ*

1. Գավառ քաղաքի Ազատության փողոցի վերջնամասում գտնվող՝ ,,Հայլենդ ֆրութ'' Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ 05-001-1134-0015 կադաստրային ծածկագրով, 14.15645հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխելու և ջերմոցային տնտեսության կառուցման թույլտվություն տալու մասին:
2. Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց N24/2 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.00195հա մակերեսով հողակտորը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով տրամադրելու, հողամասի տարեկան վարձավճարի չափը և օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
3. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:
4. Գավառ համայնքի 2016թ. բյուջեի պահուստային ֆոնդից գումար տրամադրելու մասին:
5. ,,Գավառի Մշակույթի տուն'' ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին:
6. Գավառ համայնքում ոռոգման համակարգերի ներքին ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացման համար համաֆինանսավորում իրականացնելու, հետագայում ցանցի շահագործումը և սպասարկումը Գավառի ՋՕԸ-ին հանձնելու մասին:

ՀԱՐՑ 1

ՈՐՈՇՈՒՄ 12. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ,,ՀԱՅԼԵՆԴ ՖՐՈՒԹ’’ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՝ 05-001-1134-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 14.15645ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Կ. Խաչիկյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին 16 հոդվածի 20 կետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Ազատության փողոցի վերջնամասում գտնվող՝ ,,Հայլենդ ֆրութ’’ Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ 05.001-1134-0015 կադաստրային ծածկագրով, 14.15645հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի փոխելուն և թույլատրել կառուցել ջերմոցային տնտեսություն՝ ՀՀ գործող օրենսդրությանն համապատասխան մշակված և հաստատված շինարարական նախագծի հիման վրա տրամադրված շինարարության թույլտվությունն ստանալուց հետո:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 2.

ՈՐՈՇՈՒՄ 13. Ք. ԳԱՎԱՌ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ N24/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00195ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱԿՏՈՐԸ՝ ԱՎՏՈՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետի, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ ք, Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց N24/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.00195հա մակերեսով հողակտորը՝ ավտոտնակ կառուցելու համար, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին առաջարկին և հողամասի վարձավճարի չափը սահմանել տարեկան 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ մինչև 2020թ. ներառյալ օգտագործման ժամկետով:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
| --- | --- | --- |
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ | | |
| ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| ԴԱՎԻԹ ՀՈՎՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ | | |

ՀԱՐՑ 3.

ՈՐՈՇՈՒՄ 14. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Ա. Դվոյանը

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին'' ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի և ,,Տեղական Ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 16 հոդվածի 2 մասի դրույթներով, նկատի ունենալով, որ ,,ԱՐՏԵՔՍ'' ԲԲԸ-ն վճարել է գույքահարկի մայր գումարները, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Զիջել ,,ԱՐՏԵՔՍ'' ԲԲԸ-ի /ՀՎՀՀ 08401433/ տույժերը և տուգանքները.
   գույքահարկի գծով 2603066 /երկու միլիոն վեց հարյուր երեք հազար վաթսունվեց/ ՀՀ դրամ, որից՝ 922507 /ինն հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր յոթ/ ՀՀ դրամ տույժ, 1680559 /մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար հինգ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ՝ տուգանք
   հողի հարկի գծով՝396052 /երեք հարյուր իննսունվեց հազար հիսուներկու/ ՀՀ դրամ, որից՝ 142792 /մեկ հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ տույժ, 253260 /երկու հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ՝ տուգանք :

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 4.

ՈՐՈՇՈՒՄ 15. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Ա. Հովյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2016թ. բյուջեի պահուստային ֆոնդից՝
4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել

1. 2013թ. հոկտեմբերի 16-ին ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հերոսաբար զոհված Հայոց Բանակի սպա Գեորգի Գագիկի Մնացականյանի հորը՝ Գագիկ Մնացականյանին 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն՝

2. 2016թ. հունվարի 09-ին ծառայողական պարտականությունները կատարելիս, զոհված ժամկետային զինծառայող Արամայիս Ոսկանյանի հորը՝ Յուրիկ Ոսկանյանին 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն:

3. Գավառ համայնքի տարածքում գայլ ոչնչացնելու համար Արմեն Մուխսիխաչոյանին՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 5.

ՈՐՈՇՈՒՄ 16. ,,ԳԱՎԱՌԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ'' ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Կ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Պ. Հակոբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 15 կետով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

,,Գավառի Մշակույթի տուն'' ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակել ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ալինա Խանդանյանին:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 6.

ՈՐՈՇՈՒՄ 17. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՔՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԳԱՎԱՌԻ ՋՕԸ-ԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Գ. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակավարման մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ, 16-րդ հոդվածի 2-րդ մասերով, և հիմք ընդունելով համայնքի ոռոգման ներքին ցանցերի կառուցման և վերակառուցման հետ կապված՝ ՀՀ Կառավարության աշխատակազմի ,,Գյուղական տարածքների

տնտեսական զարգացման –ԾԻԳ" Պետական հիմնարկի / ԳՏՏՁ-ԾԻԳ ՊՀ / տնօրենի կողմից Գավառի քաղաքապետարանին ներկայացված ծրագիրը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գավառ համայնքի ոռոգման համակարգի ներքին ցանցի կառուցման և վերանորոգման առաջարկը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ԳՏՏՁ-ԾԻԳ ՊՀ-ին:
2. Ոռոգման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքները ավարտելուց հետո նորակառույց համակարգի հետագա շահագործումն ու սպասարկումը հանձնել Գավառ համայնքի ՋՕԸ-ին:
3. Գավառ համայնքը պատրաստակամություն է հայտնում նշված աշխատանքները իրականացնելու համար կատարել 5% համաֆինանսավորում:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ